մանակ հոն կ'երևի Ս. Կուսի եկեղեցին զոր 1143ին Ս. Յովհաննու ասպետները ստացան Ակեղդամա ըսուած դաշտին բոլոր հողերովը։ Հին ժայռուտ գերեզմաններու վրան ու առջևը Ս. Յովհաննու ասպետները շինեցին ուխտաւորաց գերեզմանի համար մեծ կամար մը որ մինչև հիմակ կայ, և նոյն խակ Ակեղդամա անունը առաւ, և կամ, ինչպէս կ'ըսեն Արաբները Khakked-damm։ Նոյն կամարին ինը բացուած քներէն դիակները վար կը գլորէին։

Այն ծառը ուրկէ մատնիչը կախուեցաւ ըստ Աւետարանչին (Մատթ. ԻԷ. 5), ցոյց տրուեցաւ Անտոնինոսի, թզենիի բունի մը ձեւին տակ, որ բոլորովին ուղիղ կերպով քարերուն վրայ կը տարածուէր քաղաքին արևելեան դրան մօտ։ Կը կարծուի թէ անտարակոյս տաճարին մօտ պէտք է եղած ըլլայ՝ վասն զի Յուդան անկէ կուգար երբ իր ոճիրը գործեց։ Հաբիւր տարի յետոյ Յուդայի ծառը քաղաքին արևմտեան կողմը թզենի մըն էր։ Այժմ լտտենի (*) մըն է՝ չոճիի մօտ տեսքով մը։ Դայթակղութեան լերան վրայ, Երուսաղէմի հարաւը, իբր ազդարարութիւն, յարմարութեամբ կը յիշեցնէ այն աշակերտը՝ որ թշնամիներուն մատնեց իր վարդապետը (Dal. էջ 434–36)։

Մարինոս լատին պատմագիրը Ակեղդամայի համար կը գրէ հետևեալ աւանդութիւնը, որուն համաձայն՝ այս տեղը քսան և չորս ժամէն ննջեցեալի մը դիակը մոխիր կը դարձնէ եթէ հողին մէջ թաղուելու ըլլայ, և կը յարէ թէ դշխոն Հեղինէ այս հողէն նա-

(*) Zuallart (1568) ուխտաւոր ուղեգիրը լտտենին (micocoulier) կանաչ կաղնի մը կը նկատէ։ Բուսաբաններու «Յուդայի Ծառը» լաւ կը բուսնի Պաղեստինի մէջ, բայց ո՛չ Երուսաղէմի մէջ։